ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 26-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի հունիսի 28-ի <<Հանձնաժողով ստեղծելու մասին>> N 26–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝
   1) կարգադրության 1-ին կետի վերջում լրացնել
   <<Սարգսյան Ս. – ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի Ճամբարակի տեղական գանձապետական բաժնի պետ
   Մուսաելյան Կ. - ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Ճամբարակի սպասարկման գրասենյակի պետ>> բառերը.
   2) կարգադրության 2-րդ կետում <<դեկտեմբերի 20-ին:>> բառերից հետո լրացնել <<Կարգադրության կատարման ընթացքի մասին երկշաբաթյա պարբերականությամբ զեկուցել մարզպետին:>> բառերը.
   3) կարգադրության 3-րդ կետում << Սույն կարգադրության հսկողությունը վերապահել ինձ:>> բառերը փոխարինել <<Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:>> բառերով:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ